600.0422.20.09.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2017 թվականի №422Ա
քաղ. Երևան

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱՆՈ ԴԱՎԹՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2008 թվականի սեպտեմբերի 17-ի «Անհատ ձեռնարկատեր Վանո Դավթյանին (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №502Ա որոշմամբ անհատ ձեռնարկատեր Վանո Դավթյանին տրամադրվել է ռադիոհաճախականությունների օգտագործման №0440 թույլտվությունը (այսուհետ՝ թույլտվություն),

բ) անհատ ձեռնարկատերը 2017 թվականի հունիսի 30-ի գրությամբ Հանձնաժողովին տեղեկատվություն է տրամադրել բազային ռադիոկայանի տեղադրման վայրի տեղափոխության վերաբերյալ և հայտնել, որ այն օգտագործվում է իր որդու՝ անհատ ձեռնարկատեր Անդրանիկ Դավթյանի կողմից, միաժամանակ հայտնելով, քանի որ ինքը սնանկ է ճանաչվել, ռադիոհաճախականության օգտագործման վճարները վճարվելու են իր որդու՝ անհատ ձեռնարկատեր Անդրանիկ Դավթյանի կողմից,

գ) Հանձնաժողովը 2017 թվականի օգոստոսի 4-ից վարչական վարույթ է հարուցել անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ՝ թույլտվության պայմանների խախտման՝ թույլտվությունն այլ անձի օգտագործման տալու փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին անհատ ձեռնարկատերը ծանուցվել է Հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 18-ի №ԱԲ-20902 գրությամբ,

դ) հարուցված վարչական վարույթի շրջանակում անհատ ձեռնարկատերը 2017 թվականի օգոստոսի 24-ի գրությամբ ներկայացրել է պարզաբանումներ՝ համաձայն որոնց թույլտվությունը փաստացի օգտագործվում է իր կողմից և չի տրվել այլ անձի,

և իր նախորդ գրության նպատակն է եղել տեղեկացնելու Հանձնաժողովին, որ ֆինանսական վատ դրության պատճառով թույլտվության վճարները կատարելու է իր որդին՝ անհատ ձեռնարկատեր Անդրանիկ Դավթյանը: Նշված գրությանը կից ներկայացվել են նաև հիմնավորող փաստաթղթեր, այդ թվում՝ պարզաբանումներ,

ե) լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտությունից ելնելով՝ Հանձնաժողովը երկու անգամ տասնօրյա ժամկետներով երկարաձգել է անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ հարուցված վարչական վարույթի ժամկետը, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ թույլտվության պայմանների խախտման համար 2017 թվականի օգոստոսի 4-ին հարուցված վարչական վարույթը:
2. Ընդունել ի գիտություն, որ անհատ ձեռնարկատերն իրավասու է՝
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատիրոջն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ **Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

ք. Երևան
20 սեպտեմբերի 2017թ.